

զինք նաեւ «Գնունցի»։ Ինքն կ'ակնարկուի ապահովապէս յամի 1524 Մոկաց Առինչ գիւղն գրուած Աւետարանին մէջ «ի հայրապետութեան Տեառն Ներսէսի եւ յառաջնորդութեան Տեառն Զաքարիայի<sup>1</sup>»։ Է. Տաշեան (էջ 126) նկատելով Խ. Կեչառուեցւոյ ազգացցութիւնը կը կարծէ. «Թերեւս նոյն իսկ այս Կեչառուաց վանաց առաջնորդ էր Խաչատրոյ շառաւիղէն Զաքարիա, որ եպիսկոպոս կը կոչէինք զինքը, եւ որուն ժամանակն որոշ չեմ կրնար գտնել»։ Ենթադրութիւնս սակայն որ եւ իցէ հիմ չունի. եւ Է. Տաշեան կը գրէր տողերս, երբ անծանօթ էր իրեն Կրաֆորդեան Չեռագիրն, որ իրաց ուրիշ մեկնութիւն տուաւ։

4. Երկար տարիներով բազմած չ'երեւար Զաքարիա աթոռոյն վրայ. շարժառիթն անմեկնելի՝ ձեռք առած է պանդխտութեան ցուպն եւ հեռացած հայրենիքէն։ Արդէն 1538ին թողուցած էր Գնունեաց սահմաններն, վասն

---

րուն վկային († 1655) նահատակութիւնն կը գրէ. «էր սա յաշխարհէն Աստուրականի, ի գաւառէն Գնունեաց՝ որ այժմ ասի Ամուկ, ի գեղջէն, որ կոչի Ալիբը» (Առաքել, 542 = Հայոց Նոր վկաներ, 467)։ Ինչ ծանօթ են Գնունեաց եպիսկոպոսներէն յամի 510 Պաւլոս, որ զեռ 555ին կենդանի էր (Գլխ. Թղ. 42, 74), յամի 645 Գունոյ ժողովոյն ներկայ էր Տէր Թէոդորոս (var. Թագէոս. Կառն. Գառն. Ժողովոյն. էջ 27), 726ին Մանազկերտի ժողովին մէջ Յովհաննէս (Հանդ. Ամ. 1905, էջ 216)։ Անկէ մինչեւ Զաքարիա չի յիշուիր, որչափ մեզ ժառանգելի աղբերք կը ներեն։

1 Հայապատում, Գ. § 385, էջ 269։